



ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ
NATIONAL SUPREME COUNCIL OF THE ARMENIANS OF WESTERN ARMENIA
НАЦИОНАЛЬНЫЙ ВЕРХОВНЫЙ СОВЕТ АРМЯН ЗАПАДНОЙ АРМЕНИИ
المجلس الوطني الأعلى لأرمن أرمينيا الغربية

Հրաւիրուած Կառոյցի Անունը
Պատասխանատուի Անունը
Հասցէ
Նամակի թիւն ու թուականը

ՀՐԱԻՐ

Յարգելի հայրենակիցներ,

21-րդ դարու սկիզբէն ի վեր՝ Միջին Արեւելքի եւ տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումներուն եւ համաշխարհային միաբեւեռ համակարգի անխուսափելի վախճանի լոյսին տակ, Հայոց դէմ կատարուած ցեղասպանութեան ու տարագրութեան՝ ուստի եւ անարդարութեան վերացումի ժամը հասած է: Բոլոր պայմանները կան, որ արեւմտահայը տիրանայ իր իրաւունքին՝ իր գրաւեալ հողին ու խլուած ինքնիշխան պետականութեան:

Հասած է ժամը, որ հայն իր իրաւունքին տիրանայ որպէս Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ բնիկ ժողովուրդ: Այս իրաւունքը վերահաստատելու իրաւական միակ միջոցը կը հանդիսանայ՝ հայ ժողովուրդի տարագրեալ զաւակներու մասնակցութեամբ արեւմտահայութեան լիազօր մարմինի ընտրութիւնը:

Այս ընտրութիւնները կազմակերպելու համար պիտի ստեղծուի ընտրական յանձնաժողով: Այդ յանձնաժողովը պիտի ընդգրկէ իրաւագիտական եւ միջազգային օրէնքի մասնագէտներ:

Սոյն գրութեամբ հրաւիրուած էք ձեր թեկնածուն ներկայացնելու, որ մաս կազմէ նշեալ ընտրական յանձնաժողովին: Կը խնդրենք, որ նշէք թեկնածուի անունն ու մականունը, ծննդեան թուականն ու վայրը, մասնագիտութիւնը, նաեւ իր հայրական ու մայրական կողմերու արմատները Արեւմտահայաստանի մէջ:

Պայմանաժամի յարգումը կարելու է այս հոլովոյթի յաջողութեան համար: Դուք իրաւունքն ունիք մինչեւ 25 Յուլիս 2020.

1. Ձեր թեկնածուն առաջարկելու,
2. Փոխադարձ գրութեամբ մեզ լիազօրելու,
3. Կամ ալ մերժելու ձեր մասնակցութիւնը՝ հիմնաւորելով մերժումի հանգամանքները:

Պատասխանի բացակայութիւնը համարժէք է ձեր լռելեայն համաձայնութեան եւ լիազօրութեան փոխանցման:

Այս ընտրութիւնները կազմակերպելով՝ հայ ժողովուրդն իր բաղկացուցիչ բոլոր տարրերու մասնակցութեամբ կատարած կ'ըլլայ իր պարտականութիւնը, ընտրելով միջազգային իրաւա-քաղաքական կարգավիճակ ունեցող կեդրոնական միակ լիազօր մարմինը: Այդ մարմինն է, որ յետայսու պիտի դառնայ Արեւմտահայութեան կեդրոնական եւ լիազօր միակ իրաւասու ներկայացուցիչը, եւ պիտի հետապնդէ մեր ժողովուրդի սրբազան իրաւունքներու իրականացումը:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի Նախաձեռնող Մարմին

01 Յուլիս 2020

Յաւելուածներ:

- ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, 30 Ապրիլ 2020
- ԿՈՉ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ, 11 Մայիս 2020
- ԱՐԵՒՄՏԱՀԱՅ 3-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ, 01 Յունիս 2020